Արկադի Տեր-Թադևոսյան

Գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի հերոս:

Ծնվել է 1939թ. Թբիլիսիում:

1962թ. ավարտել է Բաքվի համազորային ուսումնարանը, 1972թ.՝ Լենինգրադի տրանսպորտի և թիկունքի ռազմական ակադեմիան:

Ծառայել է Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Բելառուսում, այնուհետև 1987-ից՝ Հայաստանում:

1990թ. դարձել է <<Սասունցի Դավիթ>> կամավորական ջոկատի անդամ: 1991թ. նշանակվել է ՀՀ պաշտպանության կոմիտեի արտազինվորական պատրաստության բաժնի պետ:

1991-92-ին եղել է Արցախի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարը:

Նրա ղեկավարությամբ ազատագրվել են Արցախի մի շարք բնակավայրեր, կազմվել է Շուշիի ազատագրման պլանը և իրագործվել 1992թ. մայիսի 9-ին:

1992թ. վերջին սկսել է ծառայել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում:

2001-ից Մարզատեխնիկական ընկերության նախագահն է:

Պարգևատրվել է ՀՀ <<Մարտական խաչ>> և ԼՂՀ <<Մարտական խաչ>> 1-ին աստիճանի շքանշաններով: